ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2024 թվականի № 29-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 8-ի № ԳՍ/20.1/395-2024 հանձնարականը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի նիստի ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից տրված հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող ծրագրերի կատարման ընթացքը ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1) ***Հայկ Մկրտչյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) ***Միհեր Գևորգյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

3) ***Հայկ Ալեքսանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

4) ***Հրաչյա Վարդանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ,

5) ***Անուշ Ղահրամանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

6) ***Կարեն Հունանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

7) ***Արթուր Հակոբյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

8) *Հայկ Հակոբյան* - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝ յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, հնգօրյա ժամկետում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի հունվարի 18
ք. Հրազդան